ՆՈՐ-ԴԱՐ

№ 111 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 5 Յուլիսի 1885 Ուրբաթ 5 Յուլիսի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 111

Տարեկան 10 րուբլ. Կէս տարին 6 րուբլ. Երեք ամիսը 3 րուբլի. Հատը 5 կոպէկ։ Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ". Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօներից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների [illegible] 5 կոպ. րեկլամների համար [illegible]։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

«Նոր-Դարի» բաժանորդ են գրվում յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը և վճարում են—6 ր.

Հասցէների փոփոխութեան համար վճարում են եօթը հատ եօթը կոպէկանոց մարկա։

Թերթը ամսականոցով առանց բաժանորդների վճարում են 80 կոպ.

Յայտարարութիւնները ընդունվում են միմիայն խմբագրատանը, քաղաքի կենտրոնում, պօստատան ետևը. Տրոյցկի փողոցում Վանքերա եկեղեցու հանդէպ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։

Քաղաքական.—Գորդոնը Խարտումի պաշարման մասին։ Մակեդոնիայի խառնակութիւնները։ Անգլիա.

Խառն լուրեր։

Հեռագիրներ։

Բանասիրական.—Մահմեդի կտակը։

ՔՐՈՆԻԿՈՆ

ՇԱՄԱԽԻՑ.—Ամսիս 27-ին գիշերուայ ժամը 12-ին լուր տարածուեց, թէ 15 ձիաւոր աւազակներ մտել են քաղաքը։ Տեղիս ոստիկանութիւնը և զինուորական վարչութիւնը իսկոյն [illegible] կանգնեցին։ Ամսիս 28-ին, վաղ առաւօտեան, ոստիկանութիւնը նազակներով և զինուորական վարչութիւնը [illegible] զինուորներով սկսեցին հետախուզել քաղաքիս կասկածելի տեղերը, և ոստիկանութեան ատենապետ Կոկչայեանցը քաղաքիցս 5 վերստ հեռաւորութեամբ Աղար-Աղաբեկի Թմփառեան Թուրքի վրանների մէջ, երեք կազակների օգնութեամբ, կալանաւորեց Կոկչա աւազակներին, երկու [illegible] հրացաններով և 150 փամփուշտներով։ Կոկչայեանցը կարողացաւ խոստովանեցնել աւազակներին, և այսպիսով կալանաւորուեցաւ մէկ ուրիշ աւազակ քաղաքիս մէկ տան մէջ, իսկ միւս աւազակը բացակայութեան պատճառով [illegible]։ Նրա ծերունի 70 ամեայ հայրը, երեք [illegible]։ Քննութիւնից երևացել է, որ աւազակները [illegible] պատկանում են, որոնց կանայք [illegible] օրերը [illegible] գալութիւնների մէջ։

Այս տարի [illegible] առատ է և մթերքները էժան են։ [illegible] 5—6 [illegible] 18 կ., [illegible] 55—60 [illegible] 10—12 կ., [illegible] պակասութիւն է։

ՄԱ[illegible]ՑԻՑ.—Յունիսի 19-ին այստեղից [illegible] մէկ մարդ, որին երեք օրից յետոյ գտան սպանուած և ընկած մի [illegible] այգիներից մէկում։ Սպանուածի գլուխը ճզմած է և [illegible] դուրս թափած։ Սպանութեան մասին զանազան կարծիքներ կան. ոմանք ասում են թէ Փուլադօնջինները են մեղաւոր, ոմանք էլ այդ բարեկամներին են մեղադրում, որոնք իբր թէ ժառանգութիւն [illegible] ձեռքը ձգելու համար սպանել են իրեկանին, որը [illegible] մեծ ժառանգորդ է և բացի այգիներից 1,000 ր. էլ փող ունէր։ [illegible] հայրը [illegible], իսկ մայրը ամուսնացած է ուրիշ մարդու հետ։

Նոյն օրերին մի երիտասարդ էլ [illegible] պատճառը ասում են ընտանեկան անախորժ խոսակցութիւնն է։

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ.—Այս տարի այստեղ ծիծեռնակների ձուերը [illegible] անյայտանում են։ [illegible] ծիծեռնակները շատ քիչ են երևում. [illegible] մայրերը [illegible] ձագերին և [illegible], իսկ [illegible] անյայտանում են։ [illegible] Նոր [illegible] արժէ 25 կ., ցորենինը 50—60 կ., մսի փութը 6—7 ր., [illegible] 35 կ., [illegible] փութը (40 Թանգ) 12 ռուբլուց բարձրացաւ մինչև 18—20 ր.։ [illegible] մէկ 60 կ.։ Այստեղի [illegible] այգիները [illegible] են խոստանում։ [illegible] բնութեան [illegible] միայն աւազակները մեծ անհանգստութիւն և վնասներ են պատճառում բնակիչներին։

ՇՈՒՇՈՒՑ.—Տեղիս [illegible] անկարգութիւններ չեն պատահում։ Գիւղացին ծախելու բան բերելիս [illegible] ջարդվում է [illegible] առևտրականների [illegible], որոնք բոլորն էլ [illegible] են և չեն թողնում [illegible] մարդկանց իրենց տան համար բան առնել այդ գիւղացուց։ Այդ պատճառով գիւղացիներն [illegible] քաղելով [illegible] են վաճառում իրենց [illegible] մթերքները։ Այստեղ [illegible] սկսուել է, որը առատութիւն է խոստանում։

„Русс. Кур" լրագիրը լսել է, որ բարձրագոյն շրջաններում տնօրէնութիւն է ստացուած, որ միջազգային կենդանաբուժների ժողովը կը կայանայ Փարիզում 1889 թ. սկզբին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳՈՐԴՈՆԸ ԽԱՐՏՈՒՄԻ ՊԱՇԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ։

Յունիսի 13-ին, Լոնդոնում, լոյս տեսաւ „General Gordon's Diary" վերնագրով մի գրուած, որի բովանդակութիւնն կազմում է Խարտումի պաշարման պատմութիւնը։ Այս գրքի հեղինակն ինքն Գորդոնն է, իբր ժամանակի հերոսը։ Այս հրատարակութիւնը բաղկացած է 6 հատորից և պարունակում է Գորդոնի նկատողութիւնները, որոնց նա ամեն օր անում էր երեկոյեանները [illegible] այս կամ այն անցքի մասին։ Պաշարման նկարագրութիւնը ամփոփում է իր մէջ մի ժամանակաշրջան սեպտեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 14-ը, որ նշանակում է, թէ Գորդոնը դադարել էր գրելուց Խարտումի առումից 6 շաբաթ առաջ։ Այս գիրքը խորին ուշադրութեան արժանի մի գիրք է։ Այն ամենը ինչ որ յայտնի էր մեզ Խարտումի պաշարման մասին լակոնական, շատ անգամ միմեանց հակառակ հեռագիրներից, այստեղ նկարագրուած է բոլոր մանրամասնութիւններով իրեն ականատեսի ձեռամբ։

Ահաւասիկ, օրինակի համար, թէ ինչ համեմատութիւն է անում Գորդոնը իր „General Gordon's Diary" յիշատակարանում Խարտումի պաշարման, որտեղ ինքն առաջին դերն է խաղում և Սեւաստոպոլի պաշարման մէջ, որի մէջ նմանապէս ինքն մասնակից է եղել և մինչև անգամ վիրաւորուած է։ „Սեւաստոպոլի պաշարումն, ասում է Գորդոնը, տևեց 326 օր։ Սեւաստոպոլում պաշարուածները կարող էին ամբողջ ժամանակ յարաբերութիւն ունենալ շրջապատող աշխարհի հետ, նրանք գործ ունէին քաղաքակրթեալ թշնամու հետ, որը գիտէր յարգել կռուողների իրաւունքները, վերջապէս նրանք ունէին փող և ամենայն պաշար։ Ինչ որ մեզ է վերաբերում, հաղորդակցութիւնը ընդհատուած է. մենք գործ ունինք վայրենիների հետ. քաղաքումս գտնվում է 40,000 բնակիչ, չը կայ, ոչ փող, ոչ պաշար, մենք մինչև անգամ ոչինչ համբաւ չենք ստանում արտաքին աշխարհից"։ Գեներալ Գորդոնը իրեն գծում է բազդի բերմունքին թողնուած իբր կռուակա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՀՄԵԴԻ ԿՏԱԿԸ

Վաշինգտոն Իրվինգ

ԻԴ.

Մահմեդի Մեկկա գնալը։—Նրա խուսափելն [illegible] ձեռքից, որ մի հեծելազօր վաշտով իր դէմ էր ուղարկուած։—Նրա [illegible] Մեկկայի մօտ։—Նրա բանակցելն Կորէյշների հետ քաղաք մտնելու և [illegible] թոյլտուութեան մասին։—Տասնամեայ պայմանադրութիւնը, որով նա [illegible] երեք օրով Մեկկա գալու իրաւունք է ստանում։—Նրա վերադարձն ի Մեդինա։

Արդէն վեց տարի է, որ Մահմեդ փախել էր Մեկկայից։ [illegible] Մեկկան արաբների սրբազան քաղաքն էր և նրանց բարեպաշտ ուխտաւորութիւնների գլխաւոր սրբավայրը, ուստի Մահմեդի երկարատեւ աքսորն և բացարձակ թշնամութիւնն Քիաբէի պահապան Կորէյշների հետ վնասում էին նրան [illegible] և դժուարացնում էին Նրա կրօնի [illegible]։ Նրա հետ [illegible] անգամ սկսել էին [illegible] հաւատացեալների [illegible], և թերևս նրանց հաւատն էլ թուլանալու [illegible]։

Մահմեդ օր ըստ օրէ աւելի [illegible] սրբազան քաղաքն իր կրօնի հետ միաւորելու և իր ազգի հին սովորութիւնները պահպանելու անհրաժեշտ պէտքը։ Մանաւանդ որ նա [illegible] էր, թէ երբեք [illegible] վերանորոգիչ էր [illegible] և միայն նահապետական հաւատի [illegible] վերականգնիչ։ Մօտենում էր սրբազան ուխտագնացութեանց նուիրական ամիսն՝ Զուլ-Քաադա, երբ ամենայն թշնամութիւն դադարում էր և ուխտաւորներն հաշտ հանգիստ էին [illegible] քաղաքը շրջանում։ Ի դէպ ժամին յայտնուած մի տեսիլք ազդարարեց Մահմեդին, թէ նա էլ և նրա ընկերներն էլ կարող էին համարձակ [illegible] կատարել օրէնքն և [illegible] վաղեմի [illegible]։ Այս տեսիլքը մեծ խնդութիւն պատճառեց Նրա աշակերտներին և սրբազան ամսի մէջ նա դուրս եկաւ Մեդինայից Մեկկա գնալու [illegible] իր հետ [illegible] հարիւր մարդ, [illegible] Մահաջերներ էին, [illegible] Անսարներ, [illegible]։ [illegible]

Մինչդեռ [illegible] Մեկկայի մէջ [illegible] [illegible]։ Երբ Մահմեդ լսեց, որ իր առջև մեծ [illegible] փակուած էր, ընտրեց մի ուրիշ, աւելի դըժուար լեռնային չաւիղ, մեկուսի [illegible] Մեկկայի մերձակայ [illegible] իջանելով, բանակեցաւ Հօթէյբի մէջ, սրբազան քաղաքի շրջանում։ Այս տեղից նա դեսպան ուղարկեց Կորէյշներին յայտնելու նրանց իր հաշտ նպատակն և [illegible], որ թոյլ տան իրեն վայելել ուխտաւորների սուրբ իրաւունքը։

Կորէյշների պատգամաւորներն եկան նրա բանակը դիտելու և [illegible] աշակերտները [illegible] Մահմեդի հետ։ Օրինակի համար—Նրա լուացման ջուրը սուրբ էր [illegible] նրանց աչքում. գլխի մի մազ [illegible]։ Պատգամաւորներից մին, [illegible] ժամանակ, [illegible]։ «Ես տեսած եմ, ասաց նա, Պարսից Թագաւորին և Բիւզանդական կայսրին ամենայն փառքով և մեծութեամբ, բայց երբէք չեմ տեսած, որ հպատակները այնպէս պատուէին իրենց [illegible], ինչպէս որ յարգում են Մահմեդին իւր [illegible]»։

Կորէյշների համար [illegible] թշնամուն, որ այնքան զօրեղ ազդեցութիւն ունէր [illegible]։ Մահմեդ աղէն [illegible] անգամ դեսպաններ առաքեց [illegible], բայց միշտ ի զուր։ [illegible] Օթման-իբն-Աֆֆան։ Օրեր անցան, բայց նա յետ չէր գալիս և բանակի մէջ լուր ընկաւ, թէ նրան սպանել էին։ Մահմեդ որոշեց հանել իր վրէժը [illegible] և մի ծառի տակ կանգնած, կոչեց իր բոլոր ուխտակիցներին և երդում առաւ նրանցից մինչև վերջին շունչ պաշտպանելու իր անձն և [illegible]։ Այս դէպքն յայտնի է [illegible] մէջ [illegible] ուխտագրութիւն։

Օթմանի վերադարձը վերջ դրաւ [illegible]։ Նրա հետ եկաւ և Սուհայլ, որ նշանաւոր էր [illegible] Կորէյշներից հաշտութեան պայման կապելու Մահմեդի հետ։ [illegible] վերջնական [illegible], թէ [illegible] մի բան էր [illegible] մարդու հետ, որի զօրութիւնն [illegible]։ Հաշտութիւնն [illegible] էր տասն տարուայ համար. այդ միջոցին Մահմեդ և նրա հետևողները [illegible] կարող էին [illegible] Մեկկայ, երեք օր այնտեղ մնալ և կատարել [illegible]։ Այս պայմանները [illegible], և Մահմեդ [illegible] Ալիին գրել [illegible]։ Մահմեդ [illegible] էր՝ „Գրիր, ասաց նա.—Այս են հաշտութեան պայմանները, որ հաստատեց Աստուծոյ առաքեալն Մահմեդ„։—«Կանգ, գոչեց Սուհայլ դեսպանը. եթէ ես հաւատայի, որ դու Աստուծոյ առաքեալն ես, չէի [illegible] քո դէմ. ուստի լոկ անունդ և գրէ հօրդ անունդ»։ Մահմեդ [illegible], դեռ բաւական զօրեղ չէր համարում իրեն վէճ յարուցանելու ձևերի համար, և այս պատճառով նա գրել տուաւ պարզ — Մահմեդ-իբն-Աբդալլահ-Մահմեդ, որդի Աբդալլահի, թէ և այս զիջողութիւնը մասամբ [illegible] անախորժ երևեցաւ Նրա աշակերտներին։ Բայց աւելի ևս անախորժ երևցաւ մարգարէի պատուէրն գլուխներն սափրելու և Քիաբէի համար զոհ բերուած ուղտերն խոկոյն մորթելու, [illegible] էր գալիս, թէ նա չէր կամենում մտնել Մեկկա, [illegible] ուխտաւորների սովորութեամբ, բոլոր միւս ծէսերից յետոյ պէտք էր կատարել։ Նրանք մարգարէի միտքը բերին այն տեսիլքը, որ [illegible] մուտք էր աւետել նրանց ի սուրբ քաղաքն. բայց [illegible], թէ իր հաստատած [illegible] տեսիլքի [illegible] էր, և թէ յաջորդ տարի այդ տեսիլքն [illegible] կատարուէր։ Առ ժամանակ նրանք շատացան, այս մեկնութեամբ։ Զոհերը ընծայեցան, բանակը վերցաւ, և ուխտաւորներն մասամբ դժգոհ, մասամբ [illegible], [illegible] Մեդինա՝ դէպի տուն։

(Կը շարունակուի)

բուլթինից. Նրա նկատողութիւնների մէջ տեղ տեղ գտնում ենք յանդիմանութիւններ, այլ և խիստ հեգնութիւն Գլադստոնի կաբինետի հասցէին ուղղուած։ Այսպէս օրինակի համար, խօսելով այն հեռագրի մասին, որի մէջ անգլիական կառավարութիւնը հարցնում է նրանից, թէ որքան հարկաւոր կը լինի զօրական օգնութիւն, նա ասում է. „Երեւակայեցէք ձեզ մի մարդ, որ նստած է ծովի ափին փրկարար պարանը ձեռքում։ Մի մարդ խեղդւում է։ Դժբաղդ մարդը, մահին հետ կռուելով, օգնութիւն է կանչում։ Եւ յանկարծ փրկարար պարանը ձեռքին բռնող մարդը աղաղակում է նրան. Ճիշտ յայտնեցէք ինձ, երբ ձգեմ փրկարար պարանը»։ Ահա թէ ինչպէս էր, եզրակացնում է գեներալը, վերաբերվում Լոնդոնի կառավարութիւնը դէպի Խարտում։ Ի վերջոյ և մի քանի խօսք Գորդոնի հայեացքների մասին Սուդանի և Եգիպտոսի վերաբերութեամբ։ Եթէ Մահդին կը տիրէ Խարտումին, ասում է Գորդոնը, նա նրան այն պատերազմական գործողութիւնների կեդրոնավայրը կը շինէ, որոնք ուղղուած կը լինին իւրեան Եգիպտոսի դէմ։ Նա աշխարհի նշանակութիւն էր տալիս Խարտումին։ Վերջապէս խօսելով Ֆրանսիական փոխ-հիւպատոս պ. Հերբենի մասին և գովաբանելով նրան, Գորդոնը նկատում է. „Ես իմ կողմից չեմ կարողանում հասկանալ, թէ ինչ վնաս պիտի պատճառէ մեզ Ֆրանսիան, եթէ մենք թոյլ կը տանք նրան ձայն ունենալու եգիպտական գործերում. ընդհակառակն, ես կարծում եմ, որ եթէ Ֆրանսիան վերջին ժամանակ իրաւունք ունենար եգիպտական գործերում խառնուելու, հազիւ թէ նա այդպիսի ցաւալի վիճակին հասնէր։ Երբ մենք ինքներս չունինք սեփհական քաջութիւն և ազնուութիւն, պիտի դրացիներից վեր առնենք"։

—

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

«Politische Correspondenz» լրագիրը օրերումս ստացել հետեւեալ հեռագիրը. «Սալոնիկից ստացած տեղեկութիւններին նայելով Բուլգարիայից Մակեդոնիա արշաւող աւազակային խումբը ջարդ ստացաւ տաճկական զօրքերից և երեք մասի բաժանուեցաւ, որոնցից մէկը դրեթէ բոլորովին ջնջուեցաւ, երկրորդը յետ է մղուած դէպի Բուլղարիա, իսկ երրորդը նահանջից Մալէշի ուղղութեամբ։ Աւազակներից շատերը իրենց հետ ունէին վառելանիւթեր, որոնցով կամեցել հրդեհէին գիւղերը և ամեն ինչ և այդպէս խռովութիւն յարուցանել Մակեդոնիայում»։ Հուսի յետոյ միեւնոյն «Politische Corres.» լրագրում տպուած էր. «Վերջին ժամանակ լուրեր էին տարածվում Մակեդոնիայում պատահած խռովութիւնների մասին և թէ այնտեղ կենտրոնացած են 40,000 տաճկական զօրքեր»։ Այս լուրերը բոլորովին անհիմն են և միայն այս կարելի է վերագրել այն հանգամանքին, որ այս միջոցին Մակեդոնիան խիստ նեղութիւն է կրում աւազակութիւններից, որոնք չեն վերջանում մինչև անգամ նշանաւոր զօրական ուժի օգնութեամբ։ Աւազակային հրոսակների արշաւանքները և նրանց հասուցած աւերումները սնունդ են տալիս զանազան չինծու լուրերին, որ որպէս թէ Մակեդոնիայում յեղափոխական շարժումներ են տիրապետում։ Ոչ թէ 40,000, այլ 10,000 զօրք գտնվում է ներկայումս Մակեդոնիայում, և միայն այն գնդաւորում են Կոսսովայից, որտեղ 25,000 զօրք է գումարուած, ուղարկվում այս զօրքերից, երբ նահանգական վարչութիւնները պահանջում են նրանց։ «Politik» լրագիրը վերլուծելով քաղուածները անելով „Politische Corresp.» լրագրից ասում է, որ Մակեդոնիայի վիճակը դեռ և շատ բարենորոգումների կարօտ է։ Ամենից առաջ, հարցնում է «Politik», որտեղից են յարձակվում զինաւոր աւազակային հրոսակները։ Կիսապաշտօնական թերթերը սրան շատ կարճ ու պարզ են պատասխանում — Բուլղարիայից։ Բայց մի քանի յունական լրագիրներ, օրինակ „Stamboul", այլ կերպ են բացատրում Մակեդոնիայի անկարգութիւնները։ Մենք չենք հերքում, որ կան բուլղարական աւազակներ, բայց ոճրագործութիւնների մեծ մասը, որոնց մէջ մեղադրվում են բուլղարները, յոյն աւազակների գործն է։ Այսպէս «Acropolis» լրագրին նայելով, մի ոմն բուլղարացի Մուստաֆա անունով, կարճ ժամանակում Թեսսալիայում հաւաքեց 400 յոյն, աւազակային խումբը ստուգացնելու Նեւրոկոպ Մակեդոնիայում։ Այսպէս, եթէ հաւատանք ընտիրներին „Stamboul" և „Acropolis" լրագիրներին, յոյներն են և ոչ թէ բուլղարները անկարգութիւնների սարքողները Մակեդոնիայում։

Թէպէտ, ինչպէս նկատում է „Politik", Էդմոնդ Աբու մի յայտնի գրող, յոյներին par exellence մի աւազակային ժողովուրդ է ընդունում, և այս հաստատում բազմաթիւ օրինակներով յունական պատմութիւնից, սկսած Տրոյական պատերազմից մինչև հիմակուայ ժամանակները, սակայն դժուար է ենթադրել, որ Մակեդոնիա գրոհ տուող յոյները բացառապէս աւազակութեան նպատակներով առաջնորդվում էին։ Անտարակոյս աւելի հիմնաւոր է թւում այն կասկածանքը, որ նրանք քաղաքական և ազգային նպատակներին են ձգտում, և որի շնորհիւ յունական պաշտօնաթերթերը անուշադիր են թողնում այնպիսի երեւոյթներ, որոնց մասին հաղորդում է „Acropolis" լրագիրը։ Տարակոյս չը կայ, որ յոյները ցանկանում են գրաւել Մակեդոնիան և այս նպատակներով նրանք սարքում են խռովութիւններ։ Չը նայելով այդ բոլորին հաշտարար գիտնական երեւակայութեան և քաղաքական [illegible] Աւստրիային է մեղադրում մակեդոնական խռովութիւնների մէջ։ Աւստրիան [illegible] այն [illegible] Լաւելեայի հայեացքների հետ կատարելապէս համաձայն է „Echo des Balcans" լրագիրը։ Այս թերթի [illegible] մէկը մէջ բերենք. յունական կառավարութիւնը [illegible] սահմանագլխի վերայ, նոյն կարծիքը [illegible] ցանկանում է բարեկամական յարաբերութիւններ պահպանել Բ. Դրան հետ և կալանաւորում է նրանց, որոնք պատրաստվում են Մակեդոնիայի վրայ յարձակում գործելու։ Նմանապէս ռուսական [illegible] ամեն կերպ աշխատում է խաղաղութիւնը պահպանել Բալկանեան թերակղզու վերայ։ Բուլղարական իշխանութիւնը ամեն կողմից աշխատում է [illegible] սահմանից [illegible] Արեւելեան Ռումելիային և Սերբիային, [illegible] հսկում է սահմանագլխին, [illegible] մինչև անգամ [illegible] մի որեւ է միացութեան մասին։ Այսպէս „Echo des Balcans" լրագիրը բացառապէս [illegible] եզրակացութեան է գալիս, որ Աւստրօ-Հունգարիայի վերայ է ընկնում պատասխանատուութիւնը Մակեդոնիայի խռովութիւնների։ Համարը „Politik" լրագիրը „Echo des Balcans" լրագրի կարծիքները ծիծաղելի է գտնում և հեգնաբար նկատում է, „որ եթէ Աւստրիան է այն գաղտնի ձեռքը, որը ղեկավարում է Մակեդոնիայի շարժումներին, եւրոպական խաղաղութեան չը պիտի որեւ է վտանգ սպառնայ"։

—

ԱՆԳԼԻԱ.—Յունիսի 12-ին, ժամի 5-ին ճաշից յետոյ կայացաւ պատգամաւորների ժողովի նիստը և ազատամիտները փոխեցին իրենց աթոռները պահպանողականների հետ. իսկ պարնելլականները մնացին իրենց նախկին տեղերում։ Բուռն ծափահարութիւններով բարձրանում է Գլադստոնը և ժողովին բացատրութիւններ է տալիս այն հրաժարումութիւնների մասին, որոնց պահանջել է մարկիզ Սալիսբիւրին ազատամիտ կուսակցութեան առաջնորդներից։ Նախկին առաջին մինիստրը բանակցեցաւ այն նամակները ընթերցմամբ, որոնք տեղի են ունեցել իր և լորդ Սալիսբիւրիի մէջ թագուհու միջոցաւ։ Առաջին նամակում, յունիսի 5-ից թուագրեալ, լորդ Սալիսբիւրին պնդում է, որ կառավարութիւնը իրաւունք չունի արձակել պարլամենտը։ Որովհետև նոր կառավարութիւնը չի վայելում մեծամասնութեան վերայ պատգամաւորների ժողովում, ուստի նա չի կարող կառավարել մի քանի անյետաձգելի գործեր, որոնք առաջ են եկել ընթացիկ անցքերից։ Նախ քան կառավարութեան ղեկի ստանձնելը կառավարութիւնը կամենում է մի յայտնի գործակցութիւն ազատամիտ կուսակցութեան կողմից։ Այն պայմանութիւնները, որոնց պահանջեց մարկիզ Սալիսբիւրին ազատամիտ առաջնորդների կողմից հետեւեալում է կայանում. 1) որ կառավարութեան առաջարկութիւնը Apopration-Bille-ի մասին և վճռուած վարկերի գործադրութեան մասին կրէ համաձայնութեան բնաւորութիւն; 2) որ այն պայմանը, որը ընդունուած է բիւջետում, ուրիշ միջոցներին [illegible] պետական արժեթղթերի [illegible] մի յայտնի քանակութեամբ։ Երկրորդ վիճակումն էր Գլադստոնի նամակը թագուհուն ուղղած, որի մէջ վերջինն հաւաստացնում է, որ ազատամիտ կուսակցութիւնը մտադիր չէ դժուարութիւններ ստեղծել նոր կաբինետին և ընդ սմին յայտնում է, որ հազիւ թէ համաձայն լինէր համաձայնւել պարտաւորութեան կանոնի հարցերի մասին և հրաժարվում է կանխօրէն տալ գնելու այնպիսի հարցերը, որոնց մասին ներկայումս ազատամիտ կուսակցութիւնը չունի հարկաւոր տեղեկութիւններ։ Մի ուրիշ նամակում, որը դարձեալ ուղղուած է թագուհուն, Գլադստոնը ասում է, որ համաձայն է մարկիզ Սալիսբիւրիի հայեացքի հետ, այն է, որ անկարելի է խոյսն արձակել պարլամենտը։ Յունիսի 6-ից թուագրեալ նամակում մարկիզ Սալիսբիւրին ցաւում է այն բանի վերայ, որ Գլադստոնի խօսքերի մէջ չէ տեսնում այն, որ ցանկանում է պարտաւորութիւն յանձն առնել նոր կաբինետին պաշտպանելու մինչև նիստերի վերջանալը և թէ առանց այդ տեսակ պարտաւորութիւնների նրան անկարելի է ստանձնել կառավարութեան ղեկը։ Սրան Գլադստոնը պատասխանել է, որ նա չի կարող վարվել խոստմունքներով [illegible] ժողովի ազատութիւններին։ Լորդ Սալիսբիւրին պատասխանեց յունիսի 8-ից, որ այն ամենը, ինչ որ պահանջում է նա նախկին կաբինետից այն է, որ յայտնէ, թէ նոր կառավարութեան մէջից կը տուեն պետական ընթացիկ գործերը վերջացնելու։ Վերջապէս յունիսի 9-ի նամակում Գլադստոնը ասում է, որ այն ինչ որ հարկաւոր է ֆինանսները կանոնաւորելու համար կանոնի և այնպիսի հակառակութիւններ չեն լինել, որոնք սովորական պետական հարցերում կարող էին տեղի ունենալ։ Բայց ազատամիտ կուսակցութիւնը հրաժարվում է որեւ է առանձին պարտաւորութիւններ յանձն առնելուց։ Սրբանով, ինչպէս յայտնի է, և բաւականացաւ Սալիսբիւրին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գեներալ Գորդոնի վերջատակարանի առաջին հրատարակութիւնը 10,000 օրինակ մի քանի ժամում վաճառուեցաւ միմիայն Լոնդոնում, չը նայելով, որ մէկ օրինակի գինն էր 21 շիլլինգ։

⁂

Եղունգները մարդուս հոգեկան ընդունակութիւնների բացայայտիչ.— Մի ոմն Louis Lucas անունով հրատարակեց իւր արած բազմաթիւ դիտողութիւնները այն յարաբերութիւնների մասին, որոնք գոյութիւն ունին մէկի կողմից եղունգների կազմութեան և ձեւի, և միւս կողմից մարդուս հոգեկան ընդունակութիւնների մէջ։ Այս աշխատութիւնը մանրամասն բացատրուած է „Petit Journal de la Santé" ամսագրում։ Հեղինակը հետեւեալ եզրակացութիւններ է դուրս բերում իւր դիտողութիւններից։ Կարճ եղունգները ապացոյց են համառութեան (տակտ) բացակայութեան, որ միշտ շաղկապուած է հոգեկան զօրութիւնների զարգացման հետ, խորամանկութեան և ազնուութեան բացակայութեան և գաղափարների նեղութեան։ Բարակ եղունգները ապացոյց են համբերութեան նմանութեան, [illegible] կենդանութեան։ Երկար եղունգները նշան են մարդուս եռանդի և վճռողականութեան, փափուկ եղունգները—քնքուշութեան և տկարութեան, տափակ և լայն եղունգները—շարժականութեան և գործունէութեան. եթէ որ բացի սրանից նրանք պինդ և հաստ են—այդպիսիները պատկանում են գործունեայ և գործնական անձինքներին, որոնց համար մտածել գործունէութիւնը անհրաժեշտութիւն է։ Եթէ տափակ և լայն եղունգները ընդ սմին բարակ են և լուսանցիկ—այս գործունէութեան նշան է, բայց ոչ թէ ուղեղային, այլ մարմնային գործունէութեան նշան, որ վնասում է կրկէ. նշան է թափանցիկ փիլիսոփայական խելքի. սա—քննաքանի եղունգն է, որ ցոյց է տալիս մեծ անկախութիւն։ Նեղ և կոր եղունգները, որոնք ծայրերին նեղանում են—նշան են կենդանի, բայց փոփոխական դիւրազգայութեան. եթէ բացի սրանից նրանք պինդ են, սրանց հետ միանում են և խորհմացութեան պակասութիւնը և դատողութեան թուլութիւնը, նեղսրտութիւնը, ինքնասիրութիւնը, տափականութիւնը և անձնասիրութիւնը։ Պէտք է շատ զգոյշ լինել, ասում է Lucas, երբ ծանօթանում ես այդ տեսակ եղունգներ ունեցող անձինքների հետ։ Նեղ ու կոր և բացի սրանից բարակ եղունգները—նշան են բանաստեղծական և մտածական բնաւորութեան և գործնականութեան և դատողականութեան բացակայութեան։ Ցնորուած, անհոգ, անկարգ, փոփոխական, մեղմ ծոյլ, մեղմ գործունեայ մարդը վատ է հոգ տանում իւր եղունգների վերայ և մինչև անգամ կրծում է եղունգները մինչև կաշին։ Գործունեայ, չափաւոր, անզգուշելի մարդը հոգ է տանում չափաւորապէս իւր եղունգներին և կտրում է նրանց կարճ։ Պարծենկոտ, թեթեւսոլիկ, ծոյլ, անհոգ և չնչին մարդը հոգս է տանում իւր եղունգների մասին, հարթում է նրանց և սարքում է նրանց յատուկ գործիքներով։ Դեղին եղունգները, մանուշակագոյն փայլով կամ մոխրագոյն ազատ եղունգները նշան են անհամաստ առողջութեան կամ դաժան բնաւորութեան. Պայծառ, փայլուն, մի փոքր վարդագոյն և չափազանց ողորկագոյն, առանց ակօսների եղունգները նշանագրական են թոյլ ակերչայլի (ինֆլամատիւրա) յօժարութեան համար։ Սպիտակ, անկիւնաձեւ բծերը եղունգների վերայ, ցոյց են տալիս բնաւորութեան փոփոխականութիւնը։ Վերջապէս այն եղունգները, որոնց արմատների մօտ կան կիսալուսնաձեւ կարմիր գոյնով չը ծածկուած—նշան են այն անձանց, որոնք ձգտում են իրենց ցանկութիւններին մինչև վերջը և ունեն տոկուն և միակամ բնաւորութիւն։

⁂

Իտալիայի Մարգարիտա թագուհին շատ ջերմեռանդ պարապում է գիտութիւններով և գրականութեամբ, բայց մանաւանդ սիրում է թատրոնը և նրա մերձաւորներին յայտնի է, որ թագուհին մինչև անգամ կրիտիկաներ է գրում իւր տեսած պիէսների վերայ։ Նրանցից մի քանիսը լոյս են տեսել «Gazzeta de Parma» լրագրում։ Թէև յօղուածները հեղինակի անունը չեն կրում, բայց պնդումները ծածուկ չը մնաց այդ, և գրողներից մէկը մինչև անգամ այն աստիճան կոպիտ գտնուեցաւ, որ մեղադրեց արքայազն քննադատին գրականական գողութեան մէջ, այն գրքի անունը տալով, որից քաղուած էին քննադատութեան բազմաթիւ կտորները։ Սրան պատասխան ստացաւ նա, որ բերած կտորները իրաւ է վերցրուած են յիշեալ գրքից, բայց գրականական գողութիւն չեն կազմում այն պատճառով, որ և ինքն գիրքը գրուած է միեւնոյն հեղինակից, այսինքն թագուհուց։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

„ՆՈՐ-ԴԱՐ"-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

3 Յուլիսի.

ԼՕՆԴՕՆ. Թէհրանից Standard լրագրին հեռագրում են, որ անգլիական սահմանագծի յանձնաժողովը ուղղեւորուեցաւ Հերատ։

ԼՕՆԴՕՆ. Լորդ Չերչիլլը պատգամաւորների ժողովում պատասխանեց առաջարկուած հարցին, որ հնդկական կառավարութիւնը [illegible] բանակցել աֆղանական էմիրի հետ Կանդահարում զօրանոց կառուցանելու մասին և յիշեցրեց, որ Անգլիան պարտաւորուեցաւ հարկաւոր եղած ժամանակ զօրական օգնութիւն մատուցանել էմիրին և եթէ էմիրը կը խնդրէ Կանդահարը պաշտպանելու, անգլիական քաղաքականութիւնը շատ պարզ պիտի լինի։ Ժողովը ծափահարութիւններով ընդունեց այս։

«Daily Telegrapf» ասում է, որ մի քանի օրից յետոյ Անգլիան կըսկսէ դուրս թողնել 9 միլիօն եգիպտական պարտաթուղթ։

ԴՈՒԲԼԻՆ. Միւնստերի բան ընդհատեց հատուցումները։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԻԱՐ ՍՊԱՆԴԻԱՐԵԱՆ.

Дозволено цензурою. Тифлисъ, 4-го Іюля 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի № դ. 12. Типографія А.А. Михельсона, Гол. пр. д. № 12.